ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՄԵՐԺԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՀԱՆՋԸ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՀՐԱՒԻՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԱԿԻ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԵՐԵՍ ԴԷ ԿՈՒԷԼԵԱՐԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԱԿԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Ելնելով ստեղծուած իրավիճակից Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդը Մայիսի վեցին դիմել է ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարին եւ Մարդու Իրաւունքների յանձնաժողովին՝ առաջարկելով ՄԱԿ-ի դիտորդներ ուղարկել Հայաստան եւ Լեռնային Ղարաբաղ։

ԽՍՀՄ բարձրագոյն իշխանութիւնների կողմից Հայաստանի հանդէպ կիրառուող գործողութիւնները բնութագրելով որպէս մարդու իրաւունքների ոտնահարում, բռնապետութիւնը պահպանելու, ժողովրդավարական իշխանութիւնները տապալելու փորձ, Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն խորհուրդը յայտարարել է հայ ժողովրդի դէմ ձեռնարկուող ցանկացած ոտնձգութեանը դիմակայելու իր վճռականութիւնը։